ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԱՊՐԻԼ 2009)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2009 թվականի մայիսի 22-ի նիստի «2009 թվականի մայիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին առևտրի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի (բացառությամբ արտաքին առևտրի), դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում: Դրամավարկային ցուցանիշները և ՀՀ միջազգային պահուստները հաշվարկված են հաշվեգրման սկզբունքով:

Դրամավարկային ցուցանիշների և ՀՀ միջազգային պահուստների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2009 թվականի մայիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 42

Իրական հատվածի ցուցանիշներ 44

Պետական բյուջեի ցուցանիշներ 47

Արտաքին հատվածի ցուցանիշներ 48

Դրամավարկային ցուցանիշներ 51

Ֆինանսական շուկա 61

Վարկային ներդրումներ 79

Առևտրային բանկերի ավանդներ 92

Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 94

Վճարահաշվարկային համակարգ 98

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (22.05.2009)

2009 թվականի մայիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2009 թվականի մայիսի 22-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Վ. Գաբրիելյանը, խորհրդի անդամներ Ա. Նորեկյանը, Գ. Ղոնջեյանը և Կ. Միհասյանը:

2009 թվականի մայիսի 12-ի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի հերթական նիստից հետո, հաշվի առնելով տնտեսական զարգացումների վերաբերյալ ստացված նոր տեղեկատվության կարևորությունը, մայիսի 22-ին Խորհուրդը գումարեց արտահերթ նիստ: Նիստը սկսվեց իրական հատվածի, մասնավորապես՝ ՀՆԱ ընթացիկ զարգացումների քննարկմամբ, որոնք վկայում են կանխատեսվածից ավելի խոր տնտեսական անկման միտումների առկայության մասին: Միաժամանակ, գնաճի զարգացումները ընդհանուր առմամբ համահունչ են նախանշված ուղղություններին, որը մեկ անգամ ևս վկայում է, որ գնաճը կանխատեսվող ժամանակահատվածում պահպանվելու է նպատակային միջակայքի սահմաններում:

2009 թվականի ապրիլին մարտի համեմատությամբ արձանագրվել է 3.2% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 3.1%՝ շուրջ 2.0 տոկոսային կետով գերազանցելով մարտին արձանագրված ցուցանիշը: Ընդ որում, պարենային ապրանքների գները աճել են 1.9%-ով (նպաստումը գնաճին՝ 1.0 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքներինը՝ 2.8%-ով (նպաստումը գնաճին՝ 0.5 տոկոսային կետ), իսկ ծառայությունների սակագները՝ 5.6%-ով (նպաստումը գնաճին՝ 1.7 տոկոսային կետ): Ապրիլին արձանագրված գնաճը հիմնականում պայմանավորվել է կոմունալ ծառայությունների, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի, գազի և խմելու ջրի (1.3 տոկոսային կետ), «Հացամթերք» ապրանքախմբի (0.4 տոկոսային կետ) և օդային տրանսպորտի ծառայությունների (0.3 տոկոսային կետ) նպաստումներով ընդհանուր գնաճին: Որոշակի աճ է արձանագրվել նաև կենդանական և բուսական յուղերի, մրգի և դեղամիջոցների գներում՝ ընդհանուր առմամբ նպաստելով գնաճին 0.5 տոկոսային կետով:

Քննարկելով նոր տեղեկատվության հիման վրա ճշգրտված իրավիճակային հաշվետվությունը՝ Խորհրդի անդամները փաստեցին, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի խորացման պայմաններում ապրիլին 12-ամսյա կտրվածքով արձանագրվել է 9.7% տնտեսական անկում՝ գերազանցելով սպասվող ցուցանիշը: Անկումը հիմնականում շարունակել է պայմանավորվել կապիտալի ներհոսքի կրճատման պարագայում կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող շինարարության ծավալների կրճատմամբ, ինչպես նաև արտաքին պահանջարկի նկատմամբ առավել զգայուն քիմիական արդյունաբերության ենթաճյուղերի, հանքագործության և շինանյութերի արտադրության ծավալների շարունակվող նվազմամբ: Միաժամանակ, անդրադառնալով տնտեսության վարկավորման միտումներին խորհուրդն արձանագրեց, որ վարկավորումը թեև դանդաղ տեմպերով, սակայն շարունակում է նվազել: Վերջինս վարկավորման պայմանների խստացման արդյունք է, ինչը տնտեսական վիճակի վատթարացման և տնտեսական զարգացումների հեռանկարների բարձր անորոշության պայմաններում արտահայտվում է տոկոսադրույքների աճով, վարկերի տրամադրման ընթացակարգերի ու գրավի նկատմամբ պահանջների խստացմամբ:

Արտաքին և ներքին տնտեսական զարգացումների քննարկումից հետո Խորհուրդն անցավ դրամավարկային քաղաքականության ուղղությունների քննարկմանը: Խորհրդի անդամները համաձայնեցին, որ գնաճի զարգացումները համահունչ են նախորդ կանխատեսումներին ներկայացված գնահատումներին: Մասնավորապես, գնաճը պայմանավորվել է հիմնական կոմունալ ծառայությունների սակագների բարձրացմամբ և ներմուծվող ապրանքների դրամային գների որոշակի ճշգրտմամբ, ինչը սկսվել էր դեռևս մարտի սկզբին՝ դրամի արժեզրկման հետևանքով: Ընդ որում, քննարկման ժամանակ ևս մեկ անգամ շեշտվեց, որ առաջիկա ամիսներին կարտահայտվեն նաև կոմունալ ծառայությունների թանկացման երկրորդային ազդեցությունները, և ներմուծվող ապրանքների գների ճշգրտումը կարող է շարունակվել՝ թեև շատ ավելի փոքր չափով, քան գնահատվում էր նախկինում:

Բազմիցս շեշտվեց նաև, որ գնաճի հետագա վարքագիծը պայմանավորող մակրոմիջավայրի հեռանկարները մնում են խիստ անորոշ: Կախված Կառավարության կողմից նախատեսված հակաճգնաժամային ծրագրերի ընթացքից և համաշխարհային տնտեսության վերականգնման հնարավոր ժամկետներից՝ գնաճի զարգացումները կարող են էապես տարբերվել, ուստի առկա են ինչպես գնաճի ավելացման, այնպես էլ նվազման ուղղությամբ նշանակալի ռիսկեր: Այդուհանդերձ, խորհուրդը համաձայնեց, որ գնաճի նվազման ուղղությամբ ռիսկերը գերակշռող են, քանի որ ՀՆԱ կրճատումը տեղի է ունենում գնահատվածից ավելի արագ տեմպերով, իսկ տնտեսության հիմնարարներով որոշվող հավասարակշռության մակարդակին փոխարժեքի վերադառնալու հետևանքով գնաճի նպատակային թիրախը գերազանցելու ռիսկերի դրսևորումը գնահատվում է քիչ հավանական:

Այս պայմաններում խորհուրդը որոշեց առավել կտրուկ մեղմացնել դրամավարկային պայմանները՝ տոկոսադրույքների նվազեցման և ծավալային ընդլայնման ակտիվացման միջոցով: Մասնավորապես՝ խորհուրդը համաձայնեց, որ վերջինս իրականացվելու է նաև նոր գործիքների կիրառման, այդ թվում՝ գործող կարճաժամկետ ռեպոներին զուգահեռ, ավելի երկարաժամկետ ռեպոների տրամադրման, պետական արժեթղթերի երկրորդային շուկայում ակտիվ մասնակցության միջոցով ընդլայնելով առևտրային բանկերի ռեսուրսները և նպաստելով տնտեսության վարկավորման ծավալների աճին: Այս միջոցառումներին զուգահեռ, նախատեսվում է Կառավարության կողմից մեծածավալ դրամային ռեսուրսներ ուղղել բանկերի միջոցով տնտեսության տարբեր հատվածների վարկավորմանը:

Խորհուրդը որոշեց իջեցնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը 1.0 տոկոսային կետով՝ սահմանելով այն 6.25%: Ներգրավված ավանդների և լոմբարդային վարկերի տոկոսադրույքները սահմանվեցին համապատասխանաբար 3.25% և 9.25%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*Հունվար – մարտ*	*2009թ. հունվար – մարտի իրական աճի ինդեքսը 2008թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*	*Հունվար – ապրիլ*	*2009թ. հունվար – ապրիլի իրական աճի ինդեքսը 2008թ. հունվար – ապրիլի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	465508.4	93.9	638939.3	90.3
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	101.9	-	101.8
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1]	434.1	95.7	581.6	90.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	133079.4	90.5	176967.6	88.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	1442.6	83.8	1878.5	87.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	39579.9	94.9	57028.4	95.9
Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	192912.3	103.9	262210.5	102.5
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	40128.1	78.1	51508.5	57.6
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	157470.6	99.3	216733.0	99.4
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	97899[2]	112.3[1,2]	96875[2]	110.7[1,2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1148.5	-	1164.4	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	76.1		77.0	-
Գործազրկության մակարդակը *(%)*	6.7	-	6.6	-

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2009 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	101.2	97.4	101.8	94.0
Փետրվար	98.2	98.4	99.4	95.0
Մարտ	101.4	108.1	98.0	98.4
Ապրիլ	103.2	103.9	97.8	98.8
2009 թ. հունվար – ապրիլը 2008 թ. հունվար – ապրիլի համեմատությամբ	102.3	94.1	128.2	88.9

ԳՆԱՃ

ժամանակաշրջան	*2007*	*2008*	*2009*	*2009*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.4	2.4	1.2	1.2
Փետրվար	0.2	1.1	-1.8	-0.7
Մարտ	-0.6	1.4	1.4	0.7
Ապրիլ	0.1	1.1	3.2	3.9
Մայիս	2.1	1.3		
Հունիս	-0.3	-0.5		
Հուլիս	-3.2	-2.2		
Օգոստոս	-1.5	-0.7		
Սեպտեմբեր	0.7	0.5		
Հոկտեմբեր	3.1	0.7		
Նոյեմբեր	2.1	0.1		
Դեկտեմբեր	1.5	0.1		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	6.6	5.2		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	4.4	9.0		

ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [1]

Անվանում	*Նախորդ ամսվա նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
ՍԳԻ	**103.2**	**-**
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**101.9**	**1.02**
հացամթերք	102.5	0.37
միրգ	106.5	0.17
ձկնամթերք	126.6	0.14
կենդանական և բուսական յուղեր	103.0	0.12
Ոչ պարենային ապրանքներ	**102.8**	**0.46**
դեղամիջոցներ	110.4	0.2
անձնական օգտագործման ապրանքներ և բենզին	102.7	0.1
լվացող միջոցներ	105.7	0.1
գեղահարդարման ապրանքներ	104.0	0.1
Ծառայություններ	**105.6**	**1.68**
բնակարանային, կոմունալ	118.2	1.33
տրանսպորտի	108.6	0.37
բուժսպասարկման	101.4	0.13

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [1]

ժամանակաշրջան	*2007*	*2008*	*2009*
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.19	0.40	-0.3
Փետրվար	-0.07	0.83	-0.5
Մարտ	-0.06	0.66	1.1
Ապրիլ	0.31	1.26	1.5
Մայիս	0.28	0.55	
Հունիս	-0.16	0.30	
Հուլիս	-0.19	0.02	
Օգոստոս	-0.16	0.06	
Սեպտեմբեր	0.51	0.48	
Հոկտեմբեր	0.80	0.10	
Նոյեմբեր	0.85	0.25	
Դեկտեմբեր	0.30	0.08	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	1.97	2.91	4.63
Փետրվար	2.21	3.77	3.02
Մարտ	2.07	4.54	3.33
Ապրիլ	2.05	5.66	3.47
Մայիս	2.14	5.94	
Հունիս	2.05	6.47	
Հուլիս	1.03	6.75	
Օգոստոս	1.18	6.97	
Սեպտեմբեր	1.32	6.99	
Հոկտեմբեր	1.94	6.21	
Նոյեմբեր	2.45	5.56	
Դեկտեմբեր	2.70	5.37	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼ ԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ 10 ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [1]

Անվանում	*Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)*
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**3.47**
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.6
Օդային տրանսպորտ	0.3
Ծառայություններ առողջարանների և այլ առողջարանային հաստատությունների՝ կացության, բուժման և սպասարկման ապահովմամբ	0.3
Ծառայություններ ատամնաբուժական	0.1
Եփած երշիկ	0.1
Նրբերշիկ	0.1
Ծառայություններ ախտորոշման կենտրոնների	0.1
Թռչնի միս	0.1
Դեղահաբ «Վիտամին C»	0.1
Ծառայություններ միջնակարգ կրթության՝ դպրոցի ուսման վարձ	0.1

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:


[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական գնահատումների:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսեր	ընդամենը	կենտրոնական կառավարության կազմակերպությունների հաշիվներում դրամով	կենտրոնական կառավարության հաշիվներում արտարժույթով	ԾԻԳ-երի միջոցներ դրամով	ԾԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2008									
Դեկտեմբեր [1]	0	8393	8393	103895	518	2	435	104849	**-96457**
2009									
Հունվար	0	8475	8475	111133	522	0	433	112087	**-103612**
Փետրվար	0	8147	8147	84881	522	0	434	85837	**-77690**
Մարտ	0	8560	8560	67742	629	0	522	68893	**-60333**
Ապրիլ	0	16513	16513	56492	635	0	526	57652	**-41139**

[1] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Ամվանում	*2009 թ. հունվար – մարտ (մլն ԱՄՆ դոլար)*	*2009 թ. հունվար – մարտը 2008 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*	*2009 թ. հունվար – ապրիլ (մլն ԱՄՆ դոլար)*	*2009 թ. հունվար – ապրիլը 2008 թ. հունվար – ապրիլի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	123.4	52.7	175.6	52.2
Ներմուծում *(ՍԻՖ)*	658.5	77.8	893.5	75.0
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	535.1	87.4	717.9	83.9

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2008 թվական					
	Հունվար – ապրիլ			Ընդամենը		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	329509	48589	280921	1461825	164538	1297287
ԱՄՆ	77934	56751	21182	164624	174135	-9511
Ուկրաինա	7358	6330	1028	33155	18702	14452
Ղազախստան	6043	346	5697	24302	1998	22303
Գերմանիա	8646	8683	-37	29927	46387	-16460
Իսպանիա	5429	3853	1576	13702	14188	-485
Ֆրանսիա	4333	6465	-2133	17080	25746	-8666
ԱՄԱ	25719	73489	-47770	44796	179904	-135108
Չինաստան	463	29190	-28728	1818	98449	-96632
Թուրքիա	1411	23802	-22391	3719	91301	-87582
Այլ երկրներ	90751	78999	11752	475667	309117	166550
Ընդամենը	557596	336498	221099	2270615	1124466	1146148

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2009 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	61864	8166	53698	208111	32531	175580
ԱՄՆ	7710	6682	1028	26020	29186	-3166
Ուկրաինա	1652	784	868	5447	3614	1833
Ղազախստան	2171	48	2123	5747	299	5448
Գերմանիա	1702	1155	547	5650	5719	-69
Իսպանիա	595	649	-53	2084	1948	136
Ֆրանսիա	684	632	52	2794	4393	-1599
ԱՄԱ	563	7728	-7165	4406	26616	-22210
Չինաստան	113	3918	-3805	423	14318	-13895
Թուրքիա	309	2240	-1932	901	10418	-9517
Այլ երկրներ	14559	8208	6352	92121	42667	49454
Ընդամենը	91922	40210	51712	353704	171708	181996

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2008 թվական					
	Հունվար – ապրիլ			Ընդամենը		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	313315	35541	277774	1371066	122759	1248307
ԱՄՆ	20498	12258	8239	60958	32110	28848
Ուկրաինա	7252	3380	3872	32314	10980	21334
Ղազախստան	4355	228	4127	19532	1027	18506
Գերմանիա	4775	2073	2702	13257	6287	6970
Իսպանիա	4231	850	3381	11363	2830	8533
Ֆրանսիա	2782	1588	1194	9015	5283	3731
ԱՄԱ	2898	3571	-673	11979	9921	2058
Չինաստան	167	3436	-3270	587	7699	-7112
Թուրքիա	1138	1554	-417	2539	7864	-5325
Այլ երկրներ	31322	10202	21120	102698	35479	67218
Ընդամենը	392733	74683	318050	1635307	242240	1393067

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2009 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	60394	7053	53341	201384	27791	173593
ԱՄՆ	4606	1477	3128	16083	6826	9257
Ուկրաինա	1652	701	951	5387	2743	2644
Ղազախստան	1473	48	1425	4288	209	4079
Գերմանիա	1033	189	844	3260	1064	2196
Իսպանիա	518	140	378	1812	584	1229
Ֆրանսիա	434	216	219	1766	1050	716
ԱՄԱ	269	384	-115	2096	1930	165
Չինաստան	69	412	-342	194	1394	-1200
Թուրքիա	209	377	-169	416	1406	-990
Այլ երկրներ	6087	1717	4370	23901	8034	15867
Ընդամենը	76743	12714	64029	260589	53031	207558

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ[1]

2008	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ[2]
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	138.1	137.2	133.1	132.1	133.9	133.2	130.0	133.2	137.3	142.8	150.5	149.1
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	237.2	235.6	228.1	226.2	228.4	229.6	229.0	237.0	243.7	252.9	266.4	264.2
2009	**Հ[2]**	**Փ[2]**	**Մ[2]**	**Ա[2]**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	157.6	160.7	133.8	132.5								
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	277.6	289.2	238.8	231.1								


[1] 2009 թ. հունվարից հաշվարկման մեթոդաբանությունը փոփոխվել է: Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների նկատմամբ՝ 2003-2007 թթ. կշիռներով:
[2] Ըստ ԿԲ գնահատումների:

ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2008	2009			
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	1406.8	1259.5	1141.1	1343.3	1242.0
Համախառն միջազգային պահուստներ	1406.8	1259.5	1141.1	1343.3	1242.0
Ոսկի	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ - ում	2.9	2.8	2.8	12.0	4.4
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0
Արտարժույթ [2]	1403.9	1256.7	1138.3	1331.4	1237.7

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 08[4]	Հ - 09	Փ - 09	Մ – 09[4]	Ա - 09
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [2,3]	***473916***	***426071***	***373805***	***359470***	***323122***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-24186***	***-25865***	***21601***	***32265***	***61143***
Կառավարություն	-96457	-103612	-77690	-60333	-41139
Բանկեր	80625	75162	80334	75190	57487
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	60724	55285	60260	56086	38006
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0
Ավանդներ (-)	0	0	0	-1000	-800
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-1437	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-6916	2586	18957	17407	44795
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***449731***	***400206***	***395406***	***391735***	***384265***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	344503	302102	253327	234085	238928
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	38519	24448	23660	38211	19966
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	65914	72850	117964	119042	124851
Այլ հաշիվներ	795	807	455	397	520
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	774	652	452	397	494
Այլ հաշիվներ (արտարժույթով)	21	154	3	0	26
(փոփոխությունները նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-47846***	***-52266***	***-14335***	***-36348***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-1679***	***47466***	***10664***	***28878***
Կառավարություն	-	-7156	25923	17357	19193
Բանկեր	-	-5463	5172	-5144	-17704
այդ թվում՝ ավանդներ (-)	-	0	0	1000	-200
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	-1437	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	9502	16371	-1549	27388
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-49525***	***-4800***	***-3671***	***-7470***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-42402	-48775	-19242	4843
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	-14071	-788	14551	-18246
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	6936	45114	1078	5809
Այլ հաշիվներ	-	11	-351	-58	123
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-121	-200	-55	97
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	133	-151	-3	26
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-10.1***	***-12.3***	***-3.8***	***-10.1***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-6.9***	***-183.5***	***49.4***	***89.5***
Կառավարություն	-	-7.4	25.0	22.3	31.8
Բանկեր	-	-6.8	6.9	-6.4	-23.5
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	-100.0	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	-137.4	633.2	-8.2	157.3
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-11.0***	***-1.2***	***-0.9***	***-1.9***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-12.3	-16.1	-7.6	2.1
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	-36.5	-3.2	61.5	-47.7
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	10.5	61.9	0.9	4.9
Այլ հաշիվներ	-	1.4	-43.5	-12.8	30.9

[1] *Տվյալները վերաանայվել են ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար ծրագրային փոխարժեքի փոփոխության արդյունքում:*

[2] *Առանց սեփականաշնորհման միջոցների: Զուտ միջազգային պահուստները (ՁՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը:*

[3] *ՁՄՊ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 385.00 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՍԴՀ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար:*

[4] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 08	Հ - 09	Փ - 09	Մ - 09	Ա - 09
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-147663**	**-132255**	**-139118**	**-192196**	**-157824**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	94786	101637	109778	111249	129835
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-230988	-223270	-236572	-291720	-274863
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-11461	-10622	-12325	-11725	-12796
ԶՆԱ	**539037**	**518299**	**539205**	**620928**	**586133**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	59137	54410	55421	49707	40316
Պահանջներ Կառավարության նկատմամբ	75474	73914	75004	71013	63488
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	-16337	-19504	-19583	-21306	-23172
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	49731	44373	78303	96842	101033
Պահանջներ ԿԲ նկատմամբ	133623	124031	164992	180025	167497
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-83891	-79658	-86689	-83182	-66464
Տնտեսություն	638314	622916	616353	659172	649329
Ձեռնարկություններ	284388	275963	274386	308250	306450
Դրամով	121329	115615	105027	98743	94578
Արտարժույթով	160569	157681	166197	206434	209609
Արժեթղթեր	2489	2666	3162	3073	2263
Տնային տնտեսություններ	337113	331056	325631	332798	324599
Դրամով	264666	260162	251025	242269	232767
Արտարժույթով	72447	70893	74606	90529	91832
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	9335	9243	9275	11056	11135
Դրամով	440	409	417	403	395
Արտարժույթով	8895	8835	8858	10653	10740
Այլ ֆինանսական կազմակերպություններ	7479	6655	7062	7068	7145
Դրամով	6444	5845	6718	6396	6489
Արտարժույթով	1034	810	344	672	656
Զուտ այլ ակտիվներ	-208145	-203400	-210873	-184794	-204546
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	5746	5725	4960	4732	5103
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	122	70	74	54	97
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժույթով)	-4	-19	-4	-16	-5
Ներդրումներ փայաբաժիններում	1698	1702	1693	1746	1753
Միջբանկային պահանջներ	15736	11263	14595	41746	21395
Այլ ակտիվներ	76800	80158	78766	78617	85881
Միջբանկային պարտավորություններ	-15299	-11215	-14467	-17741	-20727
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր	-4514	-5537	-5512	-5377	-5736
Կապիտալ հաշիվներ	-236621	-236079	-240246	-239876	-235599
Այլ պարտավորություններ	-51808	-49467	-50732	-48678	-56709
ԱՎԱՆԴՆԵՐ	**391374**	**386044**	**400086**	**428733**	**428309**
Դրամով ավանդներ	218776	196120	154639	143274	142037
Ցպահանջ ավանդներ	99959	90621	81299	87339	77760
Ժամկետային ավանդներ	118817	105499	73340	55935	64278
Ավանդներ արտարժույթով	172598	189924	245448	285459	286272
Ցպահանջ ավանդներ	68489	74777	90364	81388	83227
Ժամկետային ավանդներ	104108	115147	155084	204070	203045

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 08	Հ - 09	Փ -09	Մ - 09	Ա - 09
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-34379**	**-34694**	**-34358**	**-38148**	**-37647**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	343	362	201	1812	1863
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-28557	-28985	-28657	-34960	-34870
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-6165	-6072	-5903	-5000	-4640
ԶՆԱ	**39906**	**40130**	**39722**	**43900**	**43736**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	-837	-837	-1250	-1501	-1627
Զուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	1158	1871	2123	4545	5090
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	5858	6515	6598	9181	9792
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ	-4699	-4644	-4475	-4636	-4703
Տնտեսություն	58860	58242	57672	62561	61855
Ջեռնարկություններ	23272	23043	22296	25654	25714
Դրամով	6127	5942	5953	5777	5679
Արտարժույթով	17145	17102	16342	19878	20035
Արժեթղթեր	0	0	0	0	0
Տնային տնտեսություններ	35411	35022	35200	36693	35928
Դրամով	24268	23628	23338	22379	21677
Արտարժույթով	11143	11395	11862	14313	14251
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	156	155	156	193	193
Դրամով	83	83	83	83	82
Արտարժույթով	73	72	72	110	111
Այլ ֆինանսական կազմակերպություններ	21	21	21	21	21
Դրամով	21	21	21	21	21
Արտարժույթով	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-19274	-19146	-18823	-21703	-21582
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	39	43	30	33	40
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	5	7	7	1	0
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժույթով)	0	0	0	0	0
ՀՀ դրամ դրամարկղում	104	118	85	98	137
Ներդրումներ փայաբաժիններում	4	4	4	4	4
Պահանջներ վարկային կազմ-ների նկատմամբ	0	0	0	0	0
Այլ ակտիվներ	2261	3252	3104	1872	1772
Պարտավորություններ վարկային կազմ-ների նկատմամբ	0	0	0	0	0
Թողարկված պարտատոմսեր	-158	-150	-152	-153	-155
Կապիտալ հաշիվներ	-18121	-18428	-18657	-20271	-20614
Այլ պարտավորություններ	-3409	-3991	-3243	-3287	-2766
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**5528**	**5435**	**5364**	**5753**	**6089**
Դրամով փոխառություններ	4150	4079	3465	3329	3563
Ցպահանջ փոխառություններ	38	38	40	38	39
Ժամկետային փոխառություններ	4112	4041	3425	3291	3524
Արտարժույթով փոխառություններ	1377	1356	1899	2423	2525
Ցպահանջ փոխառություններ	0	0	0	0	0
Ժամկետային փոխառություններ	1377	1356	1899	2423	2525

ՀՀ ԱՅԼ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 08	Հ - 09	Փ - 09	Մ - 09	Ա - 09
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթ)	**-182042**	**-166950**	**-173476**	**-230343**	**-195471**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	95129	101999	109980	113062	131698
Արտաքին պարտավորություններ փոխ. արտարժ.	-259546	-252255	-265229	-326680	-309733
Արտաքին պարտավորություններ դրամով	-17626	-16694	-18227	-16725	-17437
ԶՆԱ	**573086**	**551914**	**572329**	**655648**	**620077**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	58299	53573	54170	48206	38689
Պահանջներ Կառավարության նկատմամբ	75770	74223	75018	71038	63488
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	-17471	-20650	-20847	-22832	-24799
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	49836	44491	78388	96940	101170
Պահանջներ ԿԲ նկատմամբ	133727	124148	165077	180122	167634
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-83891	-79658	-86689	-83182	-66464
Տնտեսություն	692475	676514	669551	717097	706482
Ձեռնարկություններ	307659	299006	296681	333904	332164
Դրամով	127457	121557	110980	104520	100257
Արտարժույթով	177713	174783	182539	226311	229644
Արժեթղթեր	2489	2666	3162	3073	2263
Տնային տնտեսություններ	371056	364606	359649	368059	359096
Դրամով	288934	283790	274363	264648	254443
Արտարժույթով	82121	80816	85286	103411	104653
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	9491	9399	9431	11249	11328
Դրամով	523	492	500	486	477
Արտարժույթով	8968	8907	8931	10763	10851
Այլ ֆինանսական կազմակերպություններ	4269	3503	3790	3884	3894
Դրամով	3235	2694	3447	3212	3238
Արտարժույթով	1034	810	344	672	656
Զուտ այլ ակտիվներ	-227524	-222664	-229781	-206595	-226265
Արտաքին ակտիվներ դրամով	5785	5768	4990	4765	5143
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	127	77	81	55	97
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-4	-19	-4	-16	-5
Ներդրումներ փայաբաժիններում	1702	1706	1697	1749	1757
Այլ ավանդային կազմ. միջև միջհատվածային պահանջներ (զուտ)	0	0	0	0	0
Միջբանկային պահանջներ (զուտ)	437	48	128	24004	668
Վարկային կազմակերպությունների միջև պահանջներ (զուտ)	0	0	0	0	0
Այլ ակտիվներ	79061	83409	81869	80489	87653
Թողարկված պարտատոմսեր	-4672	-5687	-5664	-5530	-5891
Կապիտալ հաշիվներ	-254742	-254507	-258903	-260147	-256213
Այլ պարտավորություններ	-55217	-53458	-53976	-51965	-59475
Ավանդներ	**391044**	**384965**	**398853**	**425305**	**424606**
Դրամով ավանդներ	221236	198228	156972	145215	143480
Ցպահանջ ավանդներ	98919	89306	80642	86703	76831
Ժամկետային ավանդներ	122317	108922	76330	58512	66648
Ավանդներ արտարժույթով	169808	186737	241881	280090	281126
Ցպահանջ ավանդներ	67219	73404	88489	77928	81112
Ժամկետային ավանդներ	102589	113332	153392	202162	200014

[1] *Ընդգրկված են առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ցուցանիշները:*

ՀՀ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1,7]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 08[6]	Հ - 09	Փ - 09	Մ - 09[6]	Ա - 09
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***291874***	***259121***	***200329***	***129127***	***127651***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***415914***	***401887***	***428402***	***508772***	***514951***
Կառավարություն	-38157	-50039	-23519	-12127	-2450
Տնտեսություն	692805	676838	669895	717452	706886
Չեռնարկ. և կազմակերպ.	307659	299006	296681	333904	332164
որից՝ կուտակված տոկոսներ	2411	2483	2344	3096	3385
Տնային տնտեսություններ	371386	364930	359993	368414	359500
որից՝ կուտակված տոկոսներ	4594	5070	5073	6075	6194
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	9491	9399	9431	11249	11328
որից՝ կուտակված տոկոսներ	46	35	42	55	53
Այլ ֆինանսական կազմակերպություններ	4269	3503	3790	3884	3894
որից՝ կուտակված տոկոսներ	18	15	15	23	25
Զուտ այլ ակտիվներ	-238734	-224912	-217974	-196553	-189485
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [3]	***537958***	***474117***	***386848***	***357809***	***361450***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [4]	***707788***	***661008***	***628731***	***637899***	***642602***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	315949	275237	229423	212197	217476
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով [5]	99692	89958	81095	87100	77325
որից՝ կուտակված տոկոսներ	43	61	78	44	69
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	122317	108922	76330	58512	66648
որից՝ կուտակված տոկոսներ	1968	1895	1305	1239	1277
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	169830	186891	241884	280090	281152
Ցպահանջ [5]	67240	73559	88492	77928	81138
որից՝ կուտակված տոկոսներ	11	20	33	16	21
Ժամկետային	102589	113332	153392	202162	200014
որից՝ կուտակված տոկոսներ	1643	1804	1781	2284	2638
(փոփոխությունները նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-32752***	***-58792***	***-71202***	***-1476***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-14027***	***26515***	***80370***	***6178***
Կառավարություն	-	-11882	26520	11393	9677
Տնտեսություն	-	-15967	-6943	47557	-10566
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-8653	-2325	37223	-1741
որից՝ կուտակված տոկոսներ	-	72	-139	752	289
Տնային տնտեսություններ	-	-6456	-4937	8421	-8914
որից՝ կուտակված տոկոսներ	-	476	3	1002	120
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-92	32	1818	79
որից՝ կուտակված տոկոսներ	-	-11	7	12	-1
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-766	287	94	9
որից՝ կուտակված տոկոսներ	-	-3	0	8	2
Զուտ այլ ակտիվներ	-	13822	6938	21421	7068
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-63841***	***-87269***	***-29038***	***3640***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-46779***	***-32277***	***9168***	***4702***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-40711	-45814	-17226	5279
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	-9734	-8864	6005	-9774
որից՝ կուտակված տոկոսներ	-	18	18	-34	25
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	-13396	-32592	-17817	8136
որից՝ կուտակված տոկոսներ	-	-74	-590	-66	38
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	-	17062	54992	38206	1062
Ցպահանջ	-	6318	14933	-10564	3210
որից՝ կուտակված տոկոսներ	-	9	14	-17	5
Ժամկետային	-	10743	40059	48770	-2148
որից՝ կուտակված տոկոսներ	-	161	-23	503	354

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	**-11.2**	**-22.7**	**-35.5**	**-1.1**
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	**-3.4**	**6.6**	**18.8**	**1.2**
Կառավարություն	-	-31.1	53.0	48.4	79.8
Տնտեսություն	-	-2.3	-1.0	7.1	-1.5
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-2.8	-0.8	12.5	-0.5
Տնային տնտեսություններ	-	-1.7	-1.4	2.3	-2.4
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-1.0	0.3	19.3	0.7
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-17.9	8.2	2.5	0.2
Զուտ այլ ակտիվներ	-	5.8	3.1	9.8	3.6
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	**-**	**-11.9**	**-18.4**	**-7.5**	**1.0**
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	**-**	**-6.6**	**-4.9**	**1.5**	**0.7**
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-12.9	-16.6	-7.5	2.5
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	-9.8	-9.9	7.4	-11.2
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	-11.0	-29.9	-23.3	13.9
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	-	10.0	29.4	15.8	0.4
Ցպահանջ	-	9.4	20.3	-11.9	4.1
Ժամկետային	-	10.5	35.3	31.8	-1.1

[1] Ընդգրկված են ՀՀ կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ցուցանիշները:

[2] ԶԱՄ-ն ընդգրկում է միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունները: Կենտրոնական բանկի ԶՄՊ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով (1 ԱՄՆ դոլար = 385.00 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար), առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԶԱՄ-ն՝ փաստացի փոխարժեքներով:

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[5] Ներառյալ հաշիվները:

[6] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[7] Տվյալները վերանայվել են ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար ծրագրային փոխարժեքի փոփոխության արդյունքում:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [2]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [3]	Արտարժույթով ավանդներ	M2X [4]
2008							
Դեկտեմբեր	315949	99692	415641	122317	537958	169830	707788
2009							
Հունվար	275237	89958	365196	108922	474117	186891	661008
Փետրվար	229423	81095	310518	76330	386848	241884	628731
Մարտ	212197	87100	299297	58512	357809	280090	637899
Ապրիլ	217476	77325	294801	66648	361450	281152	642602


[1] Ընդգրկված են նաև վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ ռեզիդենտներից ներգրավված փոխառությունները: Կուտակված տոկոսները ընդգրկված են ավանդների և փոխառությունների մեջ:


[2] M1-ը ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:

[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
450000
400000
350000
300000
250000
200000
150000
100000
50000
0
06
07
08
09
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտադիր պահուստներ ՀՀ դրամով
Պարտադիր պահուստներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
800000
700000
600000
500000
400000
300000
200000
100000
0
06
07
08
09
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
03
04
05
06
07
08
09


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
75
70
65
60
55
50
03
04
05
06
07
08
09


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2008					
Դեկտեմբեր	398935	287792	382880	495843	666433
2009					
Հունվար	401405	280808	372638	474072	668009
Փետրվար	407505	241863	325473	386669	679696
Մարտ	409892	226445	314116	367107	658428
Ապրիլ	402024	231374	315893	374476	663863

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների հարթեցված նոր շարքերը:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՓՈՂԻ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Ժամկետ	Փողի բազմարկիչ[1]	Դրամային բազմարկիչ[2]
2008		
Դեկտեմբեր	1.57	1.40
2009		
Հունվար	1.65	1.45
Փետրվար	1.59	1.39
Մարտ	1.63	1.31
Ապրիլ	1.67	1.39

[1] *Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:*

[2] *Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

Զուտ արտաքին ակտիվներ	2008	2009			
	Դ[2]	Հ	Փ	Մ[2]	Ա
Կենտրոնական բանկի	377543	332138	297128	340515	308701
Առևտրային բանկերի	-141800	-126480	-134088	-187426	-152629
Վարկային կազմակերպությունների	-34335	-34644	-34321	-38114	-37607
Ընդամենը	**201408**	**171014**	**128719**	**114976**	**118466**

[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվները իրենցից ներկայացնում են ինչպես փոխարկելի, այնպես էլ ոչ փոխարկելի արտարժույթներով և դրամով համախառն արտաքին ակտիվների և համախառն արտաքին պարտավորությունների տարբերությունը:*

[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

ԴՈԼԱՐԱՅՆԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(%)

Ժամկետ	D1	D2	D3	D4	D5
2008					
Դեկտեմբեր	24.4	44.0	42.9	54.9	38.2
2009					
Հունվար	28.7	49.1	45.9	57.9	38.4
Փետրվար	39.0	61.3	52.4	72.6	40.8
Մարտ	44.5	66.5	60.7	80.8	47.1
Ապրիլ	44.3	66.8	61.0	82.0	48.4

